Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 927 - Ա
որոշման

«ՀԱՇՄԱՆԴԱՄ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ
ԱՐԵՎԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆԻ ՏԵՂԱԴՐՈՒՄ» ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի, Վահագնի բնակավայրի 1-ին փողոց, թիվ 51 հասցեում գտնվող հաշմանդամ երեխաների վերականգնողական և ուսուցման կենտրոնի տանիքին 30,2 կՎտ դրվածքային հզորությամբ արևային էլեկտրակայանի տեղադրման աշխատանքների իրականացում, որի արդյունքում կենտրոնը էներգետիկ որոշակի անկախություն կստանա, քանի որ կենտրոնում սահմանափակ կարողություններով երեխաների/երիտասարդների համար նախատեսվում է ստեղծել, իրականացնել բազմաթիվ հմտությունների դասընթացներ, գործնական պարապմունքներ, այդ թվում խոհարարական, համակարգչային, կար ու ձևի: Հետևաբար էլեկտրասնուցման համար խնայած միջոցները կուղղվեն կենտրոնի զարգացմանը Լոռու մարզում ստեղծելով իր տեսակով եզակի կենտրոն, որտեղ սահմանափակ կարողու-թյուններով երեխաները/երիտասարդները, ըստ անհրաժեշտության, կարող են անցնել վերականգնողական՝ ֆիզիոթերապիայի, էրգոթերապիայի, արթոթերապ-իայի, երաժշտական թերապիայի կուրսեր, ստանալ լոգոպեդի, հոգեբանի ծառայություններ, մասնակցել կրթական, ուսումնական ծրագրերին: Ներկայումս կենտրոնի շենքում իրականացվում են ակտիվ վերանորոգման աշխատանքներ:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	Բարեգործը	Նիդերլանդների Թագավորության «Յունիթ ին Քրիսթ» բարեգործական հիմնադրամ

4.	Ծրագիրը կատարողը	«Աստղիկ» բարեգործական հիմնադրամ (իրավաբանական հասցե՝ ՀՀ, քաղ. Երևան, Տիգրան Մեծի պողոտա 24 շենք, բնակարան 30, ՀՎՀՀ՝ 00472741)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետության Լոռու մարզ, Փամբակ համայնք, Վահագնի բնակավայր, բնագավառը՝ սոցիալական
6.	Ծրագրի բյուջեն	4,750,000 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Հայաստանի Հանրապետությունում ապրող սահմանափակ կարողություններով երեխաներ և երիտասարդներ
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2025 թվականի հունվարի 23-ից մինչև 2025 թվականի փետրվարի 27-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի, Վահագնի բնակավայրի 1-ին փողոց, թիվ 51 շենք, Հաշմանդամների վերականգնողական և ուսուցման կենտրոնի տանիքին 30,2 կՎտ դրվածքային հզորությամբ արևային էլեկտրակայանի մոնտաժման աշխատանքների իրականացում՝ 4,750,000 դրամ: Նախատեսվում է իրականացնել 2025 թվականի հունվարի 23-ից մինչև 2025 թվականի փետրվարի 27-ն ընկած ժամանակահատվածում:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Արևային էլեկտրակայանի տեղադրման աշխատանքների իրականացում՝ 4,750,000 դրամ
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի աշխատակազմ, Լոռու մարզի Փամբակի համայնքապետարան:

13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Ծրագրի վերաբերյալ սահմանված կարգով հաշվետվությունների ներկայացում «Յունիթ ին Քրիսթ» բարեգործական հիմնադրամին, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

27.12.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ